

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/1

22 հուլիսի 2014 թ.

Քննարկվեց «Սյունիք» ՍՊԸ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 26.06.2014 թ-ի թիվ 1010516 ստուգման ակտ դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով «Սյունիք» ՍՊԸ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերված գանգատը և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

«Սյունիք» ՍՊԸ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերվել է գանգատ ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 26.06.2014 թ-ի թիվ 1010516 ստուգման ակտ դեմ: Այնուհետև, Հանձնաժողովի նախագահին հասցեագրված գրությամբ (մուտք ՀՀ ՖՆ 09.07.2014 թ-ի թիվ 13643-14) «Սյունիք» ՍՊԸ-ն հայտնել է, որ հրաժարվում է վերոգրյալ ստուգման ակտի դեմ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերված գանգատից և խնդրում է այն ընթացք չտալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ «Սյունիք» ՍՊԸ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերված գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Սյունիք» ՍՊԸ 03.07.2014 թ-ի թիվ 1 գրությամբ բերված գանգատի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ